

## ՄԻ ԹԻԻՐԻՄԱՑՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Ներկայ 1911 թուին մէկը միւսից յետոյ հայերէն լեզուով լոյս տեսաւ «Բէն Ղուր» պատմական վէպի 2 հրատարակութիւն. մէկը Փրանսերէնից՝ Տիրայր վարդապետի թարգմանութիւն և «Գուտտենբերգ» գրավաճառանոցի հրատարակութիւն, իսկ միւսը անգլիերէնից՝ Փիլիպպոս Վարդանեանի թարգմանութիւն և Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերութեան հրատարակութիւն:

Միաժամանակ երկու գրքերի լոյս տեսնելը բաւական խօսակցութեան առարկայ եղաւ թէ յիշեալ ընկերութեան ընդհանուր ժողովում և թէ մասնաւոր շրջաններում. ոմանք դատապարտում էին մէկ և ոմանք էլ միւս հրատարակիչներին, թէ ինչն է նրանցից մէկ կողմը, գիտենալով, որ մի թարգմանութիւն արդէն տպագրում է, նորից ձեռնարկեց նոյն գրքի տպագրութեան, մինչդեռ մէկը՝ միւսին չխանգարելու համար՝ կարող էր այդ ծախքով մի ուրիշ գիրք հրատարակել:

Շատ ճիշտ նկատողութիւն:

Մասնաւոր շրջաններում այդ խնդրի հետ կապել են իմ անունը և ասել, որ երբ Հրատարակչական ընկերութիւնը որոշել էր արդէն տպագրել պ. Փիլ. Վարդանեանի թարգմանած «Բէն-Ղուրը» և արդէն գիրքը մամուլի տակ էր, իբր թէ ես, կամենալով փրօսել ընկերութեան, շտապել եմ տպագրութեան յանձնել ինձ մօտ գտնուած՝ Տիրայր վ. թարգմանած «Բէն-Ղուրը» և նոյն իսկ անապարել եմ տպագրութիւնը առաջ գցել և աւելի վաղ լոյս ընծայել, քան ընկերութեան հրատարակութիւնը:

Եթէ այդ ճիշտ լինէր՝ ոչ թէ հասարակութեան մասնաւոր խաւերը, այլ ես ինքս էլ ինձ կդատապարտէի, որովհետեւ այդ կնշանակէր մի խոշոր քար գցել ընկերութեան գործունէութեան առաջ, որ ամբողջ տարուայ լուծութիւնից յետոյ՝ հազիւ մի գիրք էր ուզում հրատարակել:

Ես պարտաւոր եմ համարում ինձ լուսանկարչական ճշտութեամբ հրատարակ հանել իրողութիւնը, որպէսզի ընթերցողը համոզուի, թէ ճիշտն անճշտութիւն կայ թագգրած այդ բանէ կօսէնքերի» մէջ և գուցէ մի փոքր էլ «դիտաւորեալ թշնամութիւն»:

Մեր աշխատակից բարեջն. Տիրայր վարդապետը 6 տարի առաջ յանձնել էր մեզ «Լուսնայում» տպելու իր թարգմանած «Բէն-Ղուրը», որ սակայն խիստ ընդարձակ լինելու պատճառով մնացել էր մեզ մօտ անտիպ: Քանի որ վերջին տարիներս «Լու-

մայաին մենք միշտ տալիս ենք ձրի յաւելուածներ, ուստի և խըմ-  
բագրութիւնս դեռ անցեալ 1910 թուի նոյեմբերին որոշեց հե-  
տեւեալ 1911 թուի «Լուծմայաին ձրի յաւելուած տալ «Բէն-Հուր»  
վէպը և այդ մասին յայտարարեց 1910 թուի «Լուծմայաին նոյեմբ. —դեկտեմ-  
բեր միացեալ համարում եւ «Հորիզոն» ու «Մշակ» լրագիրներին 1911 թուի  
տարեգլխի համարներում:

Երբ Գուտտեմբերգ գրավաճառանոցը կարդացել էր «Լու-  
ծմայում» «Բէն-Հուրի» տպագրութեան լուրը՝ ինձ առջարկեց  
տալ իրան տպագրելու այդ վէպը, որ չէր խանգարելու մեզ և՛  
իբրև պրէմիա տալ մեր ընթերցողներին: Համաձայնութիւն տուինք  
թէ թարգմանողը և թէ ես և վէպը յանձնուեց տպագրութեան  
1910 թուի դեկտեմբերի 22-ին, որ և արձանագրուած է տպա-  
րանի նոյն թուի պաշտօնական մատենում 2255 թուահամարով:

1911 փետրուարի վերջին օրերն էր, Տիրայր վ.-ի Բէն-  
Հուրից տպուած էր արդէն 96 երես, երբ պ. Փ. Վարդանեանը  
հանդիպելով ինձ ճանապարհին՝ հարցրեց թէ ճշմարիտ է արդեօք  
որ տպում ենք «Բէն-Հուրը». պատմեցի եղելութիւնը. նա պա-  
տասխանեց, թէ ինքն էլ մի քանի աշխատութիւններ է ներկա-  
յացրել Հրատ. Ընկերութեան, նոքա ուզում են Բէն-Հուրը տպել,  
բայց քանի որ մէկ թարգմանութիւն տպուած է, ինքն այլ ևս տ-  
ւելորդ է համարում առ այժմ իրանը տպել և կիսողէ Ընկերու-  
թեան՝ փոխարէնը մի ուրիշ բան տպել իր թարգմանութիւններից:  
Այնուհետև պ. Վարդանեանը իմ բացակայութեան ժամանակ այ-  
ցելել էր մեզ, խօսել այդ մասին օր. Աղանեանի հետ, և տեսել  
Տիրայր վ.-ի գիրքը տպուելիս:

Այս դէպքից մի քանի օր անց եկաւ ինձ մօտ Հրատ. Ընկե-  
րութեան պ. քարտուղարը և ասաց, որ Ընկ. որոշել է պ. Վար-  
դանեանի «Բէն-Հուրը» տպել և ցանկանում են 3 տպարաններից  
գներն իմանալ. տպարանը յայտնեց իր գները. հետեւեալ օրը նո-  
րից եկաւ պարոնը և Ընկ. պ. նախագահի կողմից յայտնեց, որ  
Ընկ. ընդունել է տպարանի գները, ուստի և խնդրում էր անմի-  
ջապէս 2 օր. պայմանագիր գրել տպարանի կողմից և յանձնել  
իրան, յայտնելով որ հէնց հետեւեալ օրից պիտի սկսուի տպա-  
գրութիւնը և վերջանայ յունիս ամսին:

Տպարանը տուեց պայմանագիրները, որ մինչև այսօր էլ  
գտնուում է Ընկերութեան մօտ. այդ էր, կարծեմ, մարտի սկզբի  
օրերին: Այնուհետև էլ ոչ պայմանագիր տեսանք, ոչ էլ գիրք բե-  
րին տպելու: Գիտեմք միայն, որ անկիւններում սկսել էին խօ-  
սել, իբր թէ ես լսելով, որ Ընկերութիւնը ուզում է պ. Վարդա-  
նեանի Բէն-Հուրը տպել, շտապել էի մամուլին յանձնել ինձ մօտ

զանուած թարգմանութիւնը՝ Ընկերութեանը ֆուսսած լինելու համար:

Վերոյիշեալներէց երևում է, որ

1. «Լուսալոյսի խմբագրութիւնը որոշել է ապել Տիրայր վ.-ի «Բէն-Հուրը» դեռ 1910 նոյեմբերին, այդ մասին յայտարարուել է լրագիրներում 1910 զեկտեմբերին և 1911 յունուարին, լանտուել է տպարանին 1910 ղեկտեմբերի 22-ին, 1911 փետրուարի վերջին պ. Փ. Վարդանեանը ինքը տեսել է տպագրուելիս յիշեալ գիրքը և գիրքը լոյս է տեսել ապրիլի 29 ին:

և 2. Փ. Վարդանեանի՝ 1911 փետրուարի վերջին տուած վկայութեամբ՝ Հրատ. Ընկերութիւնը դեռ քննում էր նրա թարգմանութեան տպագրութեան հարցը, մարտի սկզբում ընկերութիւնը բանակցում էր տպարանների հետ ու պայման կնքեց տպարանի հետ զրքի տպագրութիւնը սկսելու և մինչև յունիս վերջացնելու. և ապա ուրիշ տեղ ապելով՝ գիրքը լոյս ընծայեց յունիս ամսին:

Եւ այլ ևս ոչինչ չունիմ աւելացնելու այս փաստերի վրայ՝ իմ մասին տարածուած անհեթեթ լուրերը արմատից ոչնչացնելու համար:

Գիւտ Աղանեանց ա. ք.